ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/04

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ

Բողոքաբեր՝ «Խաչպար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն Ս. Բալասանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Խաչպար» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 23.01.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ ընդունել որոշում արգելելու «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի թիվ «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ մատակարարման պայմանագիր կնքել հրավերի բոլոր՝ թիվ 1-13-րդ չափաբաժինների մասերով:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 23.01.2020թ.-ին:

23.01.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 03.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 03.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.02.2020թ.-ին:

2. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«<<Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ>> ՓԲԸ-ն <<Բժշկական սարքավորումների և գործիքների>> ձեռքբերման նպատակով 2019 թ. նոյեմբերի 28-ի թիվ 1 որոշմամբ հայտարարություն է հրապարակել <<ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1>> ծածկագրով գնանշման հարցման մասին, որի հրավերով պահանջվող թվով 13 չափաբաժինների մասով ապրանքների ձեռքբերման նպատակով պայմանագրերի կնքումը նախատեսված էր ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 15 հոդվածի 6-րդ մասի հիման վրա (կից փաստաթուղթ թիվ 1, էջեր՝ 1-3), ինչը փաստվում է նաև Պատվիրատուի կողմից 2019 թ. նոյեմբերի 12-ին հաստատված և <<gnumner.am>> կայքում 2019 թ. նոյեմբերի 22-ին հրապարակված <<2019թ. Գնումների պլան>>-ի թիվ 21-րդ և 22-րդ էջերում՝ Հրավերով պահանջվող ապրանքների համար նախահաշվային գների բացակայությամբ (կից փաստաթուղթ թիվ 2, էջեր՝ 1-3):

2020թ. հունվարի 21-ին, ժամը 14:41:03-ին (կից փաստաթուղթ թիվ 3, արված նշումները) Պատվիրատուի կողմից <<gnumner.am>> կայքում հրապարակվել է «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2

արձանագրությունը, որը թվագրված է 2019թ. դեկտեմբերի 19-ով (կից փաստաթուղթ թիվ 4, էջեր՝ 1-6):

2020թ. հունվարի 21-ին, ժամը 14:43:58-ին (կից փաստաթուղթ թիվ 5, արված նշումները) Պատվիրատուի կողմից <<gnumner.am>> կայքում հրապարակվել է «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու մասին որոշումը, որը թվագրված է 2019թ. դեկտեմբերի 19-ով (կից փաստաթուղթ թիվ 6, էջեր՝ 1-7):

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1՝ Կարգի, 40-րդ կետի 5-րդ ենթակետի սահմանումների՝ ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 15 հոդվածի 6-րդ մասի հիման վրա իրականացվող մրցույթներում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները), հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Վերոգրյալ պահանջները չեն պահպանվել «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից, որը բացման նիստի արդյունքներով նվազագույն գին առաջարկածներին անմիջապես հայտարարել է որպես ընտրված մասնակիցներ, և նրանց հետ պայմանագիր կնքելու որոշում է հրապարակել՝ առանց գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Խաչպար» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ ընդունել որոշում արգելելու «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի թիվ «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ մատակարարման պայմանագիր կնքել հրավերի բոլոր՝ թիվ 1-13-րդ չափաբաժինների մասերով:

3. <u>«Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 24.01.2020թ.-ին գրությամբ դիմել է «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 23.01.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 03.02.2020թ.-ի թիվ 51 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով հրավերը կատարվել է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա: Գնման հայտը ի սկզբանե եղել է նախահաշվային գներով: Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնային առաջարկը բավարար է գնահատվել գնահատման հանձնաժողովի կողմից, քանի որ բոլոր գները նախահաշվային գներից ցածր են եղել: Իսկ բանակցությունների հետ կապված, «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգողը, մեր Լիազոր մարմնի գնումների մասնագետի հետ խորհրդակցել էր, որն իր հերթին հստակ ասել էր, որ եթե հրավերը հրապարակվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, ապա այդ դեպքում բանակցությունների անհրաժեշտություն չկա: Մեր Լիազոր մարմնի գնումների մասնագետն էլ դա ճշտել էր ֆինանսների նախարարությունում վերապատրաստման ժամանակ Սերգեյ Շահնազարյանից: Սերգեյ Շահնազարյանին հարցրել էին, արդյոք ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով արված բոլոր ընթացակարգերի ժամանակ պետք է անցկացվեն բանակցություններ, որին Սերգեյ Շահնազարյանը պատասխանել է, որ ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա արված գնման ընթացակարգերի ժամանակ բանակցություններ պետք չէ վարել:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/04 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) հավելված 2-ով (այսուհետ՝ Հավելված 2) վճարման ժամանակացույցով սահմանվել է, որ վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս: Հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ:

Հրավերում առկա պայմանագրի նախագծի 8.15 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Հրավերի 8.6 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված՝ սույն հրավերի 1-ին մասի 8.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված ֆինանսական միջոցները կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել

միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել նաև «Խաչպար» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.12.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-13-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

21.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է թիվ «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

«Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից 12.11.2019թ.-ին հաստատված գնումների պլանի համաձայն՝ գնման ընդհանուր գումարներ նշված չեն:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 23.01.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը,

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման: Հայտերի բացման նիստում հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր

մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 2-ով՝ վճարման ժամանակացույցով սահմանվել է, որ վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս: Հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ:

Հրավերում առկա պայմանագրի նախագծի 8.15 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Հանձնաժողովի 19.12.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-13-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին և հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը, իսկ 21.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել

է թիվ «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

«Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից 12.11.2019թ.-ին հաստատված գնումների պլանի համաձայն՝ գնման ընդհանուր գումարներ նշված չեն:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից առանց ֆինանսական միջոցներ նախատեսված լինելու պայմանում գնման ընթացակարգը հայտարարվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ինչը նաև հաստատվել է նաև «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշմամբ: Այնուհետև Հանձնաժողովը՝ չպահպանելով Կարգի 41-րդ կետի 5-րդ ենթակետով և Հրավերի 8.6 կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները, առանց միաժամանակյա բանակցություններ անցկացնելու որոշել է 1-13-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների հետ պետք է վարեր միաժամանկյա բանակցություններ, եթե հայտերի բացման նիստին ներկա լինեին մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները), իսկ մասնակիցների և վերջիններիս ներկայացուցիչների բացակայության պայմաններում գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային ձևով պետք է ծանուցեր մասնակիցներին՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին՝ հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և Հրավերի 8.6 կետի 1-ին ենթակետի պահանջները, քանի որ գնման ընթացակարգը հայտարարվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ եթե հրավերը հրապարակվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, ուրեմն այդ դեպքում բանակցությունների անհրաժեշտություն չկա, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով ընդամենը նախատեսված են այն պայմանները, որոնց առկայության պարագայում հնարավոր կլինի կիրառել վերոնշյալ հոդվածի դրույթները: Բացի այդ օրենսդիրը հստակ սահմանել է բանակցությունների անցկացման կարգը, առանց

տարանջատելու Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի տարբերությունները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, բանակցություններ չհրավիրելով, խախտել է Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի իմպերատիվ (պարտադիր) դրույթները, վերջինիս գործողությունները ոչ իրավաչափ են և հակասում են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 23.01.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/04 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 19.12.2019թ.-ի թիվ 2 արձանագրությունը և 21.01.2020թ.-ին հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ